

ԻՐԱՔԵԱՆ ԿԱՐՅՈՎ

ՊՈՒՇ ԿԸ ԾԱՐՈՒՆԱԿԷ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պոլշ Երէկ թղթակիցներու հետ հանդիպումի մը ընթացքին անգամ մը եւս պաշտպանեց Ուաշինգթոնի կեց-ւածքը Իրաքի գծով, ըսելով, որ ամերիկացիք հարիւր տոկոս իրաւունք ունին Իրաք ներխուժելու եւ Սատամ Հիւսէյնի վարչակարգը տապալելու: «Իրաք ունի արգիլեալ վէսքեր: Մեր գաղտնի սպասարկութիւնները այդ մէկը կը հաստատեն: Ես իտրաքացի համոզուած եմ, որ ժամանակին հետ, պիտի գտնենք այդ վէսքերը անպայման», ըսաւ Պոլշ, յայտնապէս հակապղծելով այն քարոզարշաւին, որ կը կատարուի այս գծով յատկապէս Բրիտանիոյ եւ Միացեալ Նահանգներու տարածքին, ուր հետպիտէտ հանրութեան դժգոհութիւնները կը բազմապատուին ի տես այդ վէսքերուն չգոյութեան:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԵՒ ՊՐԱՉԻԼԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԱ ՍԻԼՎԱ ԼԻԲԱՆԱՆԸ ԿԸ ՆԿԱՏԵՆ ԱՌԵՏՈՒՐԻ ԿԱՄՈՒՐՁ՝ ԱՐԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԵՒ ՊՐԱՉԻԼԻ ՄԻՋԵՒ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի, որ կը գտնուի Պրազիլ, երէկ երեկոյեան բացուած կատարեց արտերկրի լիբանանցի ներդրողներու խորհուրդի խորհրդաժողովին, որ կազմակերպուած է Համա-նուն խորհուրդին կողմէ եւ Հովանաւորուած է Պրազիլի նախագահ Լուիզ-գա Ինիսասիօ Լուլա Տա Սիլվայի կողմէ:

Խորհրդաժողովին ներկայ գտնուեցան մեծաթիւ լիբանանցիներ, Պրազիլիոյ առեւտուրի գրասենեակի նախագահ Ալֆրէտ Վաքաթիթ, արտերկրի լիբանանցի ներդրողներու խորհուրդի նախագահ Նեսիպ Տաուազ, Սան Փաուլոյի կառավարիչ ժերալտօ Քամիլ, Սան Փաուլոյի քաղաքապետ Մարթա Մոպիսի, ինչպէս նաեւ վարչապետ Հարիրի ընկերակցող լիբանանցի նախարարներու պատուիրակ թիւնը, յանձինս նախարարներ Մարուան Համատէի, Ֆուադ Միսիրայի, էլիաս Աբաֆի եւ Ալի Ապտալլայի, Պրազիլի մէջ Լիբանանի դեսպան Քըզալա Սուրիի եւ բարձրաստիճանի այլ պաշտօնատարներու:

Վարչապետ Ռաֆիք Հարիրի իր խօսքին մէջ շեշտեց, որ Լիբանան ապրած է դժուարութիւններով լեցուն հանգրուան մը եւ լաւ կը գիտակցի խաղաղութեան ու կայունութեան արժեքները: Ժողովը զարգացուած է իր կայունութեան, ժողովրդավարութեան, խաղաղութեան ու ապահովութեան:

Վարչապետ Հարիրի ըսաւ, որ իսլամներու եւ քրիստոնեաներու միջեւ ծամբերաշիւ ապրելու մեր ճակատագիրն է, որմէ փա-



Հարիրի եւ Տա Սիլվա

խուստ չկայ: Վարչապետը ընդգծեց, որ Լիբանանի մէջ իսլամի եւ քրիստոնեայի միջեւ տարբերութիւն չկայ եւ ըրոյրը համահասարակ են օրէնքին ու սահմանադրութեան առջեւ:

Վարչապետը նկատել տուաւ, որ Լիբանան կրնայ հաստատ կամուրջ մը դառնալ Պրազիլի արտադրութեան եւ արարական աշխարհի շուկային միջեւ: Ան աւելցուց, որ Պրազիլ կրնայ հիմնական շուկայ դառնալ ոչ միայն լիբանանեան արտադրութեան, այլ նաեւ արաբական շատ մը երկրներու, յատկապէս քարիւղի մարզին մէջ:

Իր կարգին խօսք առաւ Պրազիլի նախագահ Տա Սիլվա, որ հաւաստեց, թէ պիտի այցելէ Լիբանան եւ

չըջանային այլ երկրներ, յառաջիկայ Հոկտեմբեր-Նոյեմբերին:

Տա Սիլվա նշեց, որ չըջան այցելութեան իր

նպատակն է փաստել, թէ Պրազիլ հետաքրքրուած է արարական հարցով եւ զօրակցութիւն կը յայտնէ Միջին Արեւելքի տագնապի արդար եւ ամբողջական լուծման:

Լուլա կոչ ուղղեց եւ յոյս յայտնեց, որ Լիբանան կը դառնայ Պրազիլի եւ Միջին Արեւելքի միջեւ առեւտուրի կամուրջը, շեշտելով, որ Պրազիլ պատրաստ է իր շուկային մէջ ընդունելու արաբական հաստատութիւններ, արտադրութիւններ եւ ներդրումներ: Ան դրուատեց Պրազիլի լիբանանեան համայնքին դերը երկրին բարգաւաճման ի խնդիր:

ՀԱԿԱՌԱՎ ԲՆԵԼՎԳԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ՊԱՂԵՍԻՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՎԵՐԱՆԱՍՏԱՏԵՅ ԻՐ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԻՆ ԸԱՆՂԵՊ

Իսրայէլ եւ պաղեստինցիները անտեսելով վայրագութեան նոր ալիքը, որոշած են յառաջիկայ մէջ պահել ամերիկեան հովանաւորութիւն վայելող խաղաղութեան ծրագիրը:

Պաղեստինցի վարչապետ Մահմուտ Ապպաս վերահաստատեց յանձնառութիւնը ծրագիրին հանդէպ: Ան վստահեցուց նաեւ, որ գործադրութեան պիտի դնէ Աքապայի վեհաժողովին աւարտին յայտարարած խոստումները: Միեւնոյն առեւ, Ապպաս պատրաստակամութիւն յայտնեց շարունակելու բանակցութիւնները արմատական թելերուն ու շարժումներուն հետ, որոնք պիտի կը քննադատեն Աքապայի յայտարարութեան համար:

Ապպաս, որ կը խօսէր Ռամալլայի մէջ, մամլոյ ասուլիսի մը ընթացքին, մերժեց իրաւարի Աքապայի իր խոստումներէն, դիտել տալով, որ հոն արտայայտած իր կեցուածքին յանձնառու կը մնայ եւ թէ այդ կեցուածքը համակարգուած է պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի հետ: Ան աւելցուց, որ իր կառավարութեան պարտականութիւնն է մեղմացնել տառապանքը պաղեստինցի ժողովուրդին: Ապպաս դիտել տուաւ, որ սահիպ կարելի չէ իրականացնել վայրագ արարքներով եւ հրահրիչ քարոզչութեամբ: Ապպաս, որ պաշտօնապէս առաջին մամլոյ ասուլիսը կու տար, Աքապայէն տեք, կոչ ուղղեց պաղեստինցիներուն մեղմացնելու յարուածութիւնը եւ վերջ տալու վայրագ արարքներու: Ան աւելցուց, որ կառավարութիւնը կարիքը ունի իրապաշտ տեսլականի մը, որպէսզի իր պարտականութիւնը կատարէ:

Ապպաս, որ կ'ուզէ ապահովել նաեւ Արաֆատի օրակցութիւնը, ըսաւ որ Աքապայի վեհաժողովի աւարտին արտասանած ճառը պիտի ներկայացնէ պաղեստինեան խորհրդարանին, որ վերջին խօսքը կ'ունենայ: Ապպասի Աքապայի յայտարարութիւնը քննադատուած էր պաղեստինեան արմատական շարժումներու կողմէ, որոնք կը մերժեն վար առնել վէսքերը եւ ենթարկուիլ Իսրայէլի դէմ պինեալ պայքարը դադրեցնելու որոշումին: Ապպաս բարկացուցած էր արմատականները, որովհետեւ «սահաբէկչութիւն» որակած էր անոնց գործողութիւնները Իսրայէլի դէմ: Անոնք կ'ըսեն, որ Ապպաս չի ներկայացնէր պաղեստինցիները: Համապատասխանեց, որ կապերն ու բանակցութիւնները կը խլկէ վարչապետին հետ, որ սակայն երէկ ըսաւ, որ պիտի շարունակէ հետապնդել երկխօսութիւնը արմատական շարժումներուն հետ, թէեւ ռեւէ մէկուն պիտի չպարտադրէ բանակցութիւնները:

Համառի Կապայի բանբերը՝ Մահմուտ Չա-

ԻՐԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐԸ ԶՈՎ ՄԸ ԵՒՍ ՏՈՒՆ

Իրաք հաստատուած ամերիկեան ուժերը գոհ մը եւս տուին երէկ՝ 29ի բարձրացնելով Սատամ Հիւսէյնի տապալումէն ի վեր իրաքի մէջ սպաննուած ամերիկացի զինուորականներու թիւը:

Ամերիկացի զինուորը սպաննուեցաւ կիրակիէն երկուշաբթի լուսնոյ գիշերուան ընթացքին, Սուրիոյ սահմանագիծին մօտ՝ Քայմ շըջանին մէկ անցարգելին վրայ, որ յարձակումի ենթարկուած էր զինեակներու կողմէ: Ամերիկեան ուժերը հակադարձած են սպաննելով զինեալ մը եւ երկրորդ մըն ալ ձերբակալելով: Չինեակները մօտեցած էին ինքնաշարժով մը եւ օգնութիւն պահանջած զինուորներէն ինքնաշարժին մէջ գտնուող «հիւանդի» մը համար:

Միւս կողմէ, ամերիկացի բարձրաստիճանի պաշտօնատարներ կը պնդեն, որ Իրաքի հաւաքական քանդուածի գէնքերը պիտի գտնուին: Ազգային անվտանգութեան հարցերու նախագահական խորհրդատու Քոնտոլիզ Ռայս, արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը եւ այլ պաշտօնատարներ գիտել կու տան, որ տեղեկագրերը սխալ եւ չինքնուրուագութիւններ չէին պարունակեր եւ թէ գէնքերը պիտի գտնուին:

Յիշեալ յայտարարութիւնները սակայն չեն ջնջեր այն իրականութիւնը, որ գէնքերը կամ անոնց գոյութեան մասին որեւէ փաստ տակաւին չէ գտնուած: Այս իրողութիւնը պատճառ կը դառնայ, որ նախագահ ձորձ Պոլշ եւ անոր կառավարութիւնը քննադատութիւններու ենթարկուին: Այս առիթին կը փորձեն օգտուել յատկապէս զեմկարտականները, որոնք կը պատրաստուին նախագահական ընտրութիւններուն:

● ՄՕՏԱՒՈՐԱՊԵՏ 5 հարիւր իրաքցիներ բողոքի ցույցի մը մասնակցեցան Պասարայի մէջ: Անոնք կը բողոքէին քարիւղի ամերիկեան ընկերութեան մը դէմ, որ իրաքցիներու փոխարէն օտար (ամերիկացի, հնդկ, ֆիլիպինցի...) գործաւորներ կ'աշխատեցնէ:

(ԱՅՓ)



հար դրական պոզիտիւ հակադարձութիւն մը ունեցաւ, յայտնելով, որ կ'ողջունէ Ապու Մապէնի յայտարարութիւնը: Ան դիտել տուաւ սակայն որ Համա կը մերժէ վարչապետին թերահաւատութիւնը իրենց պայքարին հանդէպ, զոր քարոզչութիւնը նկատեց: Իսլամական ժիհադի ղեկավար Մոհամէտ Հիւսի իր կարգին ողջունեց Ապպասի բանակցելու յանձնառութիւնը: Հիւսի աւելցուց սակայն, որ խորհրդարանը պէտք է մերժէ Ապպասի Աքապայի յայտարարութիւնը:

Միւս կողմէ, Ապպաս երէկ մերժեց հանդիպում մը ունենալ Իտալիոյ վարչապետ Սիլվիօ Պերլուսոնիի հետ, որովհետեւ այս վերջինս մերժած էր տեսակցութիւն ունենալ Արաֆատի հետ: Երոպական Միութեան պաշտօնատարները ընդհանրապէս կ'անտեսին Իտալիոյ ու Միացեալ Նահանգներու ճշմունքները եւ տեսակցութիւններ կ'ունենային Արաֆատի հետ, սակայն Պերլուսոնի ուզեց շրջանցել պաղեստինցի նախագահը: Պաղեստինեան իշխանութեան տեղեկատուութեան նախարար Նապիլ Ամր ցաւ յայտնեց, որ Պերլուսոնի խախտած է երոպացի պաշտօնատարներու աւանդութիւնը:

Զինուորական գործողութիւններու գետնի վրայ, իսրայէլեան ուժերը 13 բնակարաններ քանդեցին Կապայի հիւսիսը՝ Պէթ Հանունի մէջ: Այսրորդական Վեպրոն քաղաքին մէջ Կիրակի երեկոյեան տեղի ունեցած բախումներուն սպաննուած են իսրայէլացի պինտոր մը եւ պաղեստինցի երկու պինեակներ:

ԾԱՐՈՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՊԱՇՏՎՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ԻՍՐԱԵԼԻ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն՝ Լիբնուսի ընդհանուր ժողովին արտասանած իր ճառին

Շար.՝ էջ 10

ԿՐԻՊՔՈՎ ԿԸ ԲԱՅԱՅԱՅՏԵ ԵԱՎԿԻ ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ ԿՈՎԿԱՍ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՅԵՏԱԶԳՄԱՆ ԾԱԼՔԵՐԸ

Լեւնային Ղարաբաղի տագնապի լուծման ԵԱՀԿ Մինսքի խմբակի ռուս նախագահ Նիքոլայ Կրիպոզով «Մետիամաքս» լրատու գործակալութեան յայտնած է, թէ Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւի առողջական վիճակը միակ պատճառը չէր ԵԱՀԿ Մինսքի խմբակի նախագահներու այս տարուան Մայիսին նախատեսուած Հարաւային Կովկաս այցելութեան յետաձգման: Ըստ Կրիպոզովի, միջազգային միջնորդները տակաւին կը ճշդեն այցելութեան ժամկէտերը:

Անդրադառնալով վերջերս Մատրիտի մէջ Հայաստանի եւ Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարներու հետ հանդիպումին, Կրիպոզով այդ հանդիպումները պարզապէս որակած է «զրական եւ կառուցողական»: «Դժբախտաբար, ես չեմ կրնար ըսել աւելին, նկատի ունենալով բանակցային գործընթացի գաղտնի հանգամանքը», ընդգծած է Նիքոլայ Կրիպոզովը:

Ազրպէյճանական լրատուամիջոցներու համաձայն, Մատրիտի հանդիպումներէն ետք Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիբեյ յայտարարած է, թէ Լեւնային Ղարաբաղի տագնապի լուծման գծով Մինսքի խմբակի նախագահներու առաջարկած նոր տարբերակները արժանի են քննարկման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՐԳԻՃԱՆԿԱՐԻՉԻՆ ԱԿՆՈՅՈՎ

ԷՁ 4

ԵԳԷԱԿԱՆԻ ՎԵՐԵԻ ԹՐՔԱԿԱՆ ԷՖ. 16ԵՐ ՅՈՒՆԱԿԱՆ ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ՕԴԱՆԱԻ ՍԸ ՕԴԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ԿԸ ԲՈՆԱԲԱՐԵՆ

Աթէնք, 9 (ԱՅՓ).- Յունաստան յայտնած է, որ թրքական ԷՖ 16 տիպի ռազմական 2 օդանաւեր Երկուշաբթի օր Եգէական ծովուն վերեւ վտանգաւոր կերպով մօտեցած են յունական ձամբորդատար օդանաւի մը: Աթէնք Թուրքիոյ բանակը ամբաստանած է հրահրութեամբ, որ շրջանին մէջ ապահովութիւնը կը վտանգէ:

Թրքական օդանաւերը, որոնք յայտնապէս ռազմափորձերու կը մասնակցէին, բախումի ընթացքի մէջ գտնուած են Աթէնքէն Պոլիս ուղղուող օդանաւին հետ, որ 70 ձամբորդ կը փոխադրէր, ըստ «Օլիմփիք Էրուէյկ» ընկերութեան եւ յունական ծովուծի աղբիւրներու:

Յունաստանի պաշտպանութեան նախարար Եաննու Փափանթունի ըսած է. «Բռնաբարոյներու բազմապատուութիւնը, անոնց գրգռիչ բնույթը եւ թուրք օդաչուներու պնդումները՝ յոյն օդաչուներու հետ բախումներ ունենալու, մեծ վտանգ կը ներկայացնեն շրջանին ապահովութեան համար»:

Կառավարութեան բանբերը՝ Խրիսթոս Փրոթոփափա թրքական բանակը ամբաստանած է «դիտումնաւոր կերպով հրահրումներ» կատարելու յանցանքով, յայտնելով, որ Աթէնք պաշտօնապէս զանգատ պիտի ներկայացնէ Թուրքիոյ, ինչպէս նաեւ Երոպական Միութեան եւ ՕԹԱՆԻ:

Ըստ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Փանու Պեկլիթի, Յունաստան Ուրբաթ օր միայն իր օդային տարածքին 145 բռնաբարումներ արձանագրած է:

«Թրքական բանակին կեցուածքը ամբողջովին կը հակադրուի թրքական կառավարութեան Ե. Միութեան մօտենալու առաջադրութեան», ըսած է ան:

ԼՈՒՐԵՐ ՄԵԾԻ ՏԱՆԵ ԿԻՆԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ (ՄՆԹԻՒ ԻԱՍ)

ՔԱՐԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքին մէջ Կիրակի, 8 Յունիս 2003ին տեղի ունեցաւ քահանայական ձեռնադրութիւն, ձեռամբ գործ. Տ. Ջարեհ Արք. Ազնաւորեանի: Դպրեվանքին քահանայից դասարանէն Յովսէփ սրկ. Շիթիլեան եւ Վրէժ սրկ. Քէօզկէրեան քահանայական կարգ ստացան, ամուսնացեալ քահանայութեամբ ծառայելու Աստուծոյ, մեր եկեղեցոյ ու ժողովուրդին:

«Զի ողորմած» էն ետք, ընծայեալները տաճարի դասէն ծնրադիր սկսան յառաջանալ դէպի խորան: Ապա ընմին վրայ, խորտաւիլակ հայր սուրբը վկայեց անոնց արժանաւորութեան մասին եւ հրաւիրեց զանոնք սրբազան հօր դիմաց, ստանալու անոր առաջին օրհնութիւնը: Աշխարհէ հրաժարման ու Քրիստոսի հետեւորդ դառնալու խորհրդալից պահուն, ընծայեալները դարձան դէպի ժողովուրդը, ու բոլորին վկայութեամբ յանձն առին մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի լուծը: Ապա քահանայական կարգի յատուկ իշխանութիւնները ստանալէ ետք, զգեստաւորութեան քահանայական հանդերձանքով:

«Առաքելոյ աղանդ» շարականի երգեցողութեամբ ձեռնադրիչ սրբազանը սրբալոյս Միւռոն հեղուց սրուակին մէջ եւ օծեց Աստուծոյ ընծայեալ ծառաներուն ճակատն ու ձեռքերը: Յովսէփ սրկ. Շիթիլեան վերակոչեցաւ ու մատուցաւ: Յովսէփ սրկ. Քէօզկէրեան՝ Տ. Պողոս քահանայ:

Ձեռնադրիչ սրբազանը իր քարոզին մէջ նկարագրեց քահանայական կոչումը որպէս ծառայութիւն Աստուծոյ եւ ժողովուրդին եւ կոչ ուղղեց նորընծայ քահանայ հայրերուն՝ հաւատարիմ գտնուելու իրենց հոգեւոր կոչումին:

Եկեղեցական արարողութեան աւարտին, նորընծայները միաբանեցին եւ դպրեվանքի շաղկերտներու թափօրով բարձրացան վեհարան: Վեհափառ հայրապետը նորընծայներուն ուղղած իր պատգամին մէջ շեշտեց հատուցի մարդ ըլլալու ու հաւատքը կեանքով ու գործով արժեւորելու կարեւորութիւնը: Ապա նորընծայները ստացան վեհափառ հայրապետին օրհնութիւնը՝ «Պատգամն իջող»:

Նորընծայ հովիւները մեր սուրբ եկեղեցոյ քառասունորեակ պահեցողութեան շրջանէ մը ետք պիտի սկսին իրենց հոգեւոր առաքելութեան: Տ. Պողոս քահանայ Շիթիլեան պիտի մեկնի Միացեալ Նահանգներու արեւելեան թեմ, իսկ Տ. Պողոս քահանայ Քէօզկէրեան մաս պիտի կազմէ Լիբանանի թեմի քահանայից դասուն:

ՀԱՄԱՉԱՅՈՒՆԻ ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԿԼՈՐ ՄԵՂԱՆ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՅՈՒՄԻ ՄԱՍԻՆ



Համազգայինի Լեւոն Շանթ կեդրոնի «Գ. եւ Հ. Արմէնեան» սրահին մէջ երէկ, երեկոյան ժամը 20:00ին, կազմակերպութեամբ Համազգայինի Լիբանանի շրջանային վարչութեան, տեղի ունեցաւ կլոր սեղանի մը, «Ազգերու եւ յատկապէս մշակոյթներու դիմագրաւած մարտահրաւէրը համաշխարհայնացման ալիքին դիմաց» թեմայով:

Կլոր սեղանին բացումը կատարեց Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան անդամ Սեդա Խտըշեան, որ յայտնեց, թէ այս ձեռնարկը կազմակերպուած է օգտուելով Բանաստայի եւ Ճրանասայի մէջ ապրող մտաւորականներու Լիբանան գտնուելէն: Կլոր սեղանին կը մասնակցէին Յակոբ Պալեան (Ճրանասա), Վրէժ - Արմէն (Բանաստ) եւ տղթթ. Յովհաննէս Թասլաքեան (Լիբանան): Զրուցավարն ու նիւթերու համագործընդերս Վաչէ Փափազեան:

«Համաշխարհայնացում» ի նման մեծ եւ ընդարձակ նիւթի մը մասին խօսելով, իւրաքանչիւր գեկուցաբեր տարբեր վարկեաններու ժամանակամիջոցի մը մէջ ներկայացուց իր տեսակէտը: Եւ ընկալան է, որ իւրաքանչիւր գեկուցաբեր տարբեր տեսակէտ յայտնէր նիւթին վերաբերեալ:

Այսպէս, Վրէժ - Արմէն ընդհանրապէս խօսեցաւ Համաշխարհայնացումի թեմային մասին: Ան նաեւ ըսաւ, որ հին ժամանակաշրջաններուն ալ գոյուցիւն ունեցած են համաշխարհայնացումի գանազան գրքերուն մէջ, բայց ներկայ ընթացքը կը յատկանշուի տեղեկութիւններու աւելի մեծ փոխանակումով, արհեստագիտութեան զարգացումով եւ մեծ ընկերութիւններու տնտեսական տիրապետութեամբ: Հայուցիւնը պատմութեան տեսանկյունից յատկանշուած է օտար գաղափարները իւրացնելու եւ հայկական իր դրոշմը անոնց վրայ ձգելու յատկանշով: Այսպէս եղած է քրիստոնէութեան պարագային, որ համաշխարհային խոր ունեցող վարդապետութիւն մըն էր: Նոյնը կրնանք ըսել նաեւ Համաշխարհայնացումի պարագային, անոր օգտակար երեւոյթները իւրացնելով եւ մեր հայկական դրոշմը զննելով անոր վրայ:

Տղթթ. Յովհաննէս Թասլաքեան շեշտը դրաւ համաշխարհայնացումի տնտեսական եւ ընկերային երեւոյթներուն վրայ: Ան նշեց անդրազգային ընկերութիւններուն ունեցած ժխտական դերակատարութիւնը համաշխարհային տնտեսական գործընթացներուն վրայ: Տղթթ. Յովհաննէս Թասլաքեան աւելցուց, որ ներկայիս Համաշխարհայնացումի վտանգներուն, անոր համար ալ հայուցիւնը պէտք է մտածէ համաշխարհայնացումի դրական երեւոյթներէն առաւելագոյն օգտուելու մասին:

Յակոբ Պալեան ամբողջութեամբ հակառակ տեսակէտ արտայայտեց նախորդ երկու կարծիքներուն: Ան ըսաւ, որ ներկայ համաշխարհայնացումի գործընթացը ժխտական երեւոյթներով լեցուն է. անկա կու գայ իր գլխին տակ առնելու աշխարհի բոլոր փոքր ժողովուրդները: Այս միջոցառումի մէջ զարմանալի է, թէ ինչո՞ւ հայ ժողովուրդը չի մասնակցիր հակահամաշխարհայնացման շարժումներուն, իր ինքնուրոյնութեան պահպանման ի խնդիր:

Կլոր սեղանի գեկուցումներուն ներկայացումէն ետք տեղի ունեցաւ զրոյց՝ գեկուցաբերներուն եւ ներկաներուն միջեւ:

Փակելով կլոր սեղանը, օրուան գրուցավար Վաչէ Փափազեան համադրելով արտայայտուած տեսակէտները, նշեց, որ ներկայ դրութեան մէջ անհրաժեշտ է տարբերել համաշխարհայնացումի ռազմավարական եւ մարտավարական ընտրանքները, մշակելով ռազմավարութիւն՝ համաշխարհայնացման մարտահրաւէրները դիմադրուելու համար:

Arabic calligraphy and logos for various organizations, including 'Al-Sayid' and 'Al-Sayid'.

Տեղական մամուլը երէկուան թիով զիջաւորաբար լուսարձակի տակ առած է պաղեստինեան տպագրութեան, Միացեալ Նահանգներու կողմէ քանցուած մէջ 4 իսրայէլացիներու դէմ ծայր առած գործողութիւնները եւ վերջին պարզացումները, ինչպէս նաեւ Մոնրիթանիոյ իշխանութեան լեղաշրջումը:

Լիբանանեան քաղաքական ներքին կեանքը եւ ղեկավարութեան միջեւ յարաբերութիւնները կը գրաւեն առաջին էջերուն զիջաւոր խորհրդարանը:

«Սաֆիր» գրած է, թէ իսրայէլ կը մերժէ որեւէ գաղթականի վերադարձ: Ֆաթի, Համաս եւ Ժիհադ միասնաբար գործողութիւն մը կը կատարեն. իսրայէլեան իշխանութիւնները պաղեստինեան ղեկավարներէն կը պահանջեն քայլեր առնել 5 իսրայէլացիներու մահէն ետք:

Ուաշինկթըն կը պահանջէ յաւելեալ ճնշում քանցել պաղեստինեան ղեկավարներէն, որ տարածաշրջանի ներքին շրջան կ'ընեն Աքապայի վեհաժողովին տեղի ունեցած խաբէութիւններուն մասին երկխոսութեան: Ապու Մապէս կ'ըսէ.

«Թերեւս իմ ուղեքնմանս պիտի հասկցուեցաւ եւ հիմա գնդակը կը գտնուի «Համաս» ի դաշտին մէջ»: Միւս կողմէ, Սուրիոյ արտաքին գործոց նախարարութեան անունով խօսելով, Պուսայան Եսափան քննադատելով Շարմէլ Ելիիի որոշումները ըսած է, թէ Ապապայ լուր կը մնայ իսրայէլի դիմաց, դիտել տուած է «Սաֆիր»:

Ըստ «Տիւրք»-ի, Հեպթաբընի եւ Էրէպի մէջ անսպասելի կապեր կը տեսնուին: Երկու գործողութիւններու տեղի ունեցան: Իսրայէլեան պիտուութեան կեդրոնացումը դէմ կատարուած յարձակումին պիտի արձագանքէ:

Ըստ «Սաֆիր»-ի համաձայն, իրաքեան բարձրագոյն խորհուրդի շարքերուն մէջ ձեռքարկութիւններ կը շարունակուին: «Անուար» նշած է, թէ ամերիկացի պիտուութեան ղեկավարները կը շարունակուին եւ Ուաշինկթըն իրաքցիներուն կողմէ կ'ուղղէ պատերազմը գործողութեան մասին տեղեկ պահելու:

Ըստ թերթին, Պաղեստինեան քաղաքացիները կը դիմադրեն իրաքեան արձագանքներուն մէջ անսպասելի կապերուն մէջ: Թերթը նաեւ արձագանք տալով իսրայէլեան քաղաքացիներուն կողմէ անսպասելի կապերուն մէջ անսպասելի կապերուն մէջ:

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԵ ՊԱՐԳԵԿՍՐԵ ՆԱԽԿԻՆ ԴԵՍՊԱՆ ԺԱՆ ԿՈԿԻԿԵԱՆԸ

Անցեալ շաբաթավերջին հողին յանձնուեցաւ Լիբանանի առաջին հայ դեպուտատ Ժան Կոկիկեանը, իր յառաջացեալ տարիքին մէջ:

Աւելի քան քառասուն տարին ժան Կոկիկեան հաւատարմութեամբ ծառայեց Լիբանանի դիւանագիտութեան եւ արտաքին յարաբերութեանց բնագաւառէն ներս: Ան իրրեւ գոնսիւր եւ դեպուտատ ծառայեց Լիբանանի, Հունգարիոյ, Իտալիոյ, Քրոմպիոյ, Արժանութիւնի եւ այլ երկիրներու մէջ: Ստանձնած է գլխաւոր պաշտօններ արտաքին նախարարութեան ներս:

Ժան Կոկիկեանի յուղարկուելու մասին տեղի ունեցաւ Կիրակի օր, Անթիլիասի Մայր տաճարին մէջ, նախագահութեամբ Լիբանանի առաջնորդ սրբազանին: Յանուն վեհափառ հայրապետին, առաջնորդ սրբազանը ժան Կոկիկեանը յետ մահու պարգեւատրեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Ասպետի կարգ» ի շքանշանով: Թաղման արարողութեան ներկայ գտնուեցան Լիբանանի հանրապետութեան նախագահին, խորհրդարանի նախագահին եւ վարչապետին ներկայացուցիչները, պետական երեսփոխաններ ու նախարարներ:

ՎԵՏԱՓԱՌ ԸՆԴՈՒՄԵՆ ԸՆԴՈՒՄԵՆ ԼԻՔԱՆԱՆԻ ԵՐԻՄՈՆԵՅՍ ՍԿԱՒԵՆԵՐՈՒ ՀԱՄԱՍՏՐՈՒՄԸ

Երկու շաբաթի առաւել վեհարանի դահլիճին մէջ Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. կաթողիկոս ընդունեց Լիբանանի Քրիստոնեայ Սկառուներու Համախմբումը ներկայացնող կազմը:

Այցելութեան նպատակն էր վեհափառ հայրապետին պարզել համախմբումին նպատակը եւ ունեցած գործունէութիւնը: Վեհափառ հայրապետը ողջունելով այս նախաձեռնութիւնը ըսաւ. «Մեծապէս գնահատելի է կատարուած միատեղ աշխատանքը ու ձեռնարկները: Գնահատուած է միատեղ աշխատանքը: Այս ուղղութեամբ անհրաժեշտ է նկատուի ունենալ հետեւեալ կէտերը.

ա.- Սկառուտի գլխաւոր մարզակերտումի ազդու միջոց է: Մարմինը կրթելով հանդերձ անհեկեւ կը կրթէ միտքն ու հոգին: Հետեւաբար միտքը, հոգին ու մարմինը իրենց ամբողջութեամբ մէջ պէտք է նկատուի առնուի ձեռք գործունէութեան ընթացքին:

բ.- Սկառուտի գլխաւոր բարոյական արժէքներու ուսուցման գլխաւոր մըն է: Պատանիի դաստիարակութեան մէջ բարոյական արժէքներու ներկայութիւնը հրամայական անհրաժեշտութիւն է:

գ.- Ներկայ համախմբումը առիթ մըն է երիտասարդութեան միասին ըլլալու եւ երիտասարդութեան առնչուած մարտահրաւէրները միասին դիմագրաւելու:

դ.- Քրիստոնեայ սկառուներու համախմբումը նաեւ առիթ մըն է քրիստոնէական միութիւնը արտայայտելու, ինչ որ կենսական պահանջ մըն է այսօր աւելի քան երբեք:

Ապա վեհափառ հայրապետը երկու թեղադրութիւններ կատարեց.

ա.- Կապեր հաստատել հայ սկառուական միութիւններուն հետ, որպէսզի ամբողջական գործակցութիւն տեղի ունենայ հայ եւ արարական սկառուական կառույցներուն միջեւ:

բ.- Անհրաժեշտ է նաեւ բացուիլ իսլամ սկառուական կառույցներուն, որպէսզի կարելի դառնայ Լիբանանը բազմակցող բոլոր համայնքներուն սկառուական կառույցներու միջեւ մնայուն գործակցութեան ծրագրեր ներմշակել:

Advertisement for Orient Plus travel agency, featuring the Zarna brand and flight information to Cyprus and Greece.

Large advertisement for 'STAY' (ՏԵՍԱԿԵՏ) travel agency, offering flights to Cyprus and Greece with contact details and a website.

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ ՄԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻՆ



Կազմակերպությունները Հիմնադրամի մէջ ՄԱԿԻ Տեղեկատվական Գրասենեակին (UNIC) 29-30 Ապրիլին Պէյ-րուսթի ՄԱԿԻ կեդրոնին մէջ տեղի ունեցաւ խորհրդաժողով մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին 9 համալսարաններէ 185 ուսանողներ:

Խորհրդաժողովը ընդգրկեց ՄԱԿԻ Ընդհանուր Ժողովի հետեւողութեամբ 5 նիստեր, որոնց ընթացքին ուսանողներէն իւրաքանչիւրը կը ներկայացնէր ՄԱԿԻ անդամ երկիր մը: Նիստերուն ընթացքին քննարկուեցան 5 բանաձեւեր՝ պատրաստուած ուսանող - պատուիրակներուն կողմէ, «Երիտասարդութիւն եւ կառավարում Միջին Արեւելքի մէջ» նիւթով: Նիստերը ընթացան ՄԱԿԻ Ընդհանուր Ժողովի օրէնքներուն եւ դիւանագիտական փորձագիտութեան հիմամբ, ինչ որ առիթ ընձեռեց մասնակից ուսանողներուն ծանօթանալու դիւանագիտական գործունէութեան նրբութիւններուն եւ ՄԱԿԻ գործելակերպին: Խորհրդաժողովին ընթացքին տեղի ունեցան նաեւ 7 դասախօսութիւններ՝ նոյնպէս ՄԱԿԻ կառուցներուն եւ գործունէութեան մասին: Դասախօսողներուն շարքին պէտք է լինել Սթեֆան Տէ Միսթուրա, Ղասսան Թուէճնի, Նախիլ Մաքբուրի, Ռիտա Թապարա: Խորհրդաժողովի աւարտին բաժնուեցան վկայականներ:

Հայկազեան համալսարանէն 12 ուսանողներ իրենց մասնակցութիւնը բերին այս խորհրդաժողովին: Նիստերը կանխող երկու ամիսներուն ուսանողներու այս խմբակը հետեւեցաւ նախապատրաստական խտացեալ ծրագիրի մը՝ դուկտ. Արա Սանճեանի եւ Անդրանիկ Տաքսեանի վերահսկողութեամբ: Համալսարանի տնօրէնութիւնը մտտէն հետեւեցաւ նախապատրաստական այս դասախօսութիւններուն եւ հանդիպումներուն, որոնց համար պարբերաբար հրաւիրուեցան հիւր դասախօսներ եւ մասնագէտներ:

Խորհրդաժողովին ընթացքին Հայկազեան համալսարանի ուսանողներուն պատրաստութիւնը ակնյայտ էր, երեւոյթ մը, որ իր վրայ հրաւիրեց դասախօսներուն եւ մամուլ ներկայացուցիչներուն ուշադրութիւնը: «Նահար» օրաթերթը իր 30 Ապրիլի թիւին մէջ ղրուատիքով խօսեցաւ Հայաստանը ներկայացնող հայկազեանցի ուսանողին մասին՝ զայն բնորոշելով իբրեւ «բացառիկ» հայ եւ արաբ ժողովուրդներու յարաբերութիւններուն եւ հայ ժողովուրդին պատահած աղէտին մասին իր խօսքին մէջ»:

Ստորեւ կու տանք Հայկազեան համալսարանը ներկայացնող 12 ուսանողներուն անուններն ու իրենց ներկայացուցած երկիրները:

- Նախիլ Մուրատեան (Հայաստան)
- Նանոր Գարակէօզեան (Յունաստան)
- Յովիկ Էթիմեզեան (Եգիպտոս)
- Մովսէս Պապայեան (Պուրթիան Ֆասո)
- Լիլիթ Յովհաննէսեան (Մոնաքօ)
- Միւրէյ Պողարեան (Պոլիվիա)
- Նատին Շէրի (Մալի)
- Ռաֆա Մուսուաթ (Մալաուի)
- Ալի Ապտալէթըր (Պելճիքա)
- Ջարիկ Գանազուրեան (Չեխիա)
- Գէորգ Գէորգեան (Պարագվայ)
- Ճոնի Թուժա (Իտալիա)

ԸԱՅԱՍՏԱՆ - ԸԱՅԱՍՏԱՆ - ԸԱՅԱՍՏԱՆ - ԸԱՅԱՍՏԱՆ - ԸԱՅԱՍՏԱՆ

ԵՐԵՔ ՓԱՍՏԱԺՈՒՂԹԵՐ՝ «ՇՐՋԱԿԱՅ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ» ՀԱՄԱԵՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻՆ

Քիւելի մէջ 22 Մայիսին բացուեց կատարուած է բնապահանջութեան նախարարներու 5րդ համաերոպական խորհրդաժողովին, որ քննարկած է «Շրջակայ միջավայրը եւ Երոպայի համար» հարցը եւ այլ կենսոլորտային հարցեր: Միեւնոյն ժամանակ մասնակիցները հաշուետուութիւններ ներկայացուցած են աղմուկի, շոգարձակ նիւթերու եւ ճառագայթման հարցերու վերաբերեալ: Այս խորհրդաժողովին մասնակցած է նաեւ Հայաստանի պատուիրակութիւնը՝ բնապահանջութեան նախարար Վարդան Այվազեանի ղեկավարութեամբ:

Հայաստանի բնապահանջութեան նախարարութեան մամուլ քարտուղարին համաձայն, Հայաստանի ներկայացուցիչները խորհրդաժողովին ներկայացուցած են «Ջրային եւ արդիւնաբերական վնասներու», «Քաղաքացիական պատասխանատուութեան եւ անդրազմանային ջնջումը արդիւնաբերական վնասներու փոխանցման մասին», ինչպէս նաեւ՝ «Ռազմավարական բնապահանջական գնահատում» արձանագրութիւններն ու համապատասխան փաստաթուղթերը:

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿԻ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 300ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Երեւանի Պետական համալսարանի պատմութեան բաժանմունքին մէջ վերջերս տեղի ունեցաւ գիտաժողով մը, որ նուիրուած էր Ս. Փեթերսպուրկի հիմնադրութեան 300ամեակին:

Գիտաժողովին ներկայացուած երեք զեկուցումներուն նիւթերը կ'առնչուէին Ս. Փեթերսպուրկի Արեւելագիտութեան հիմնարկի հայագիտութեան ամպիոնի գործունէութեան, ուսանական պատմագիտութեան մէջ Արեւելեան Հայաստանի Ռուսիոյ միացման գնահատման ու Ս. Փեթերսպուրկի հիմնադրման, ինչպէս նաեւ՝ այն պայքարին, որ մղուած է Պայթիկ ծովուն տիրապետելու համար:

Գիտաժողովին ընթացքին զեկուցումով հանդէս եկան Հայաստանի մէջ Ռուսիոյ դեպքան Անաթոլի Տրիւբոյ, Հայաստանի հանրագիտական եւ պատմութեան ամպիոնի դոցենտ Անդրանիկ Վարդանեան, պատմական գիտութիւններու դոկտոր Միքայէլ Մուրատեան, յարակից երկրներու պատմութեան ամպիոնի վարիչ Կորնիլ Զեմրիկ Աբրահամեան եւ պատմութեան ամպիոնի դոցենտ Գարեգին Յարութիւնեան:

ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ


3 Յունիսին Հայաստանի Գրողներու Միութեան Տան մէջ Երեւանի Մենեճմընթի համալսարանի լրագրութեան ամպիոնը կազմակերպած էր լուսանկարչական ցուցահանդէս մը, որ կը կրէր «ՅՄ ակնթարթ» խորագիրը:

Ցուցահանդէսին մէջ ներկայացուած էին երկրորդ կարգի ուսանողներու նկարները, որոնցմէ իւրաքանչիւրը, Հայաստանի Գրողներու Միութեան քարտուղար Գ. Մուրատեանի կարծիքով, կեանքի մը պատմութիւն է, փաստ մը, որ հետագային արժէք կրնայ դառնալ:

Տարեկան հերթականութեամբ կազմակերպուող լուսանկարչական այս ցուցահանդէսը իր տեսակին մէջ չորրորդն է:

Համալսարանի նախագահութեան կողմէ լաւագոյն լուսանկարի («Աթոռակիրը») համար պատուոգիր արժանացաւ Գեղուհի Ասատրեան, իսկ լրագրական լաւագոյն լուսանկարին համար՝ Հերմինէ Գրիգորեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԵՐԳԻԾԱՆԿԱՐԻՉԻՆ ԱԿՆՈՑՈՎ



ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ

ԵՐԱՆԵԼԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՈՅԵԱՆԻ

- Ով Սուրբ Իգնատիոս, Դուն բարի հովիւ, Մնացիր կառած խաչին փրկաւէտ:
- Պարպապէս բարի Վարդապետ էիր, Մալոյեան անուն՝ Տանօթ ամէնուն:
- Միշտ դուն սիրեցիր Ընկեր, թշնամի, Քեզ հայաժեցի: Անգուր անտեղի:
- Բայց սէրը սրտիդ Անհուն էր, անհուն, Հաւատքով հաստատ Մնացիր կանգուն:
- Ինչ փոյթ, թէ յոգնած Ուկեցիր կերտել Կեդրոն դպրութեան, Համայն հայութեան:
- Եւ կանայք ըլլան Ուշիւ, պարգացած, Ճանչնալով լեզուն, Սիրելով զ'Աստուած:
- Եւ ամբաստանուած, Բանտի մէջ, ինչպէս Խօսեցար մօրդ, Թէ երջանիկ ես:
- Կառչած մնացէք Չեր Ս. հաւատքին, Բանտին մէջ իրար խօսքը կրկնեցին:
- Ինչպէս Մարտինէն Հեռու դաշտի մէջ, Լսեցիր ձայներն Ողջ թաղուողներու:
- Ապա հասցուցին Հարուածներ յատուկ, Քեզ մեծարելու Փշէ պատկով:
- Եւ դուն ապրեցար Տառապանքի մէջ, Երկինքէն բերուած Արեան ծայրքումով:
- Եւ հոն գրուեցաւ Լուրթեան մէջ լոյս, Սէր անուն Յիսուս՝ Դարման ցաւերու,
- Օրինէ մեզ այսօր, Ռ՝Վ Ս. Իգնատիոս, Հօտիդ Մարտինի Արքեպիսկոպոս:

ԱՅՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen

We Also Provide

- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ՑՈՒՑԱՍԱՐԱՐ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՈՐԸ

ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՅՇՈՒ, ԱՅԵՏԻ ԶԵԼԸ, Բ. ՅԱՐԿ

ՇՏՆ. (01) 242555/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

ԵՐԵՎԱՆԻ ԲԵՆԵԿՆԵՐԸ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Ն. ԱԳԱԼԵԱՆ» ՄԱՍՆԱԺԻՂ

ՀԱՅՐԵՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Հովանաւորութեամբ՝ **ՏԻԿԻՆ ԼԻՄԻ ԹԻԹԻՒՆՃԵԱՆԻ**

Յուցահանդէսին բացումը տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 11 Յունիս 2003, երեկոյեան ժամը 7:00ին, «Աղբալեան - Բ.Ս.Բ.Ս.» մարզամշակութային համալիրի «Սարգիս Սարգիսեան» սրահին մէջ:

ԵՐԱԵՐ

ԵԱՆՕԹ.- Յուցահանդէսը պիտի շարունակուի մինչեւ Ուրբաթ, 13 Յունիս 2003:

ԵՐԿՕՐԵԱՅ ԲԱՅԱՊԻԿ ԶՐԶԱՊՏՈՅ 14 ԵՒ 15 ՅՈՒՆԻՍԻՆ

Թարթուս, Պանիաս, Առուտի կղզին մաւակով, Լաթաքիա քաղաքը եւ շուկան, գիշերը՝ Քեսապ, պանդոկի մայրաձայնով եւ ընթրիքով: Գին՝ միայն 45 \$:

Մէկ շաբաթ Մինսք, պանդոկ, մայրաձայնով: Գին՝ 499 \$:

Մէկ շաբաթ մաւով Կիպրոս եւ Յունաստան կղզիներ 495 \$, լման ձաշերով, ամեն գիշեր խրախմբով:

15 - 29 Օգոստոս **ԵՐԵՎԱՆ**, Սեւան - Ծաղկաձոր լման պտոյտներ վիզաւորով եւ տուրքերով միայն 625 \$-ն սկսեալ փոխան 1100 \$:

Արձանագրութեան համար դիմել **ԱՃՃԵԱՆ ԹՈՒՐԶ:** Հեռ. 01 - 261177, 01 - 240654 եւ 03 - 233978:

ԱՌՈՂՋԱՊԱՐԱԿԱՆ

Ա. Հ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԱՅՆ ԱՇԽԱՐՀ ՊԱՏՐԱՍՏ ԶԷ ՍԱՐՄ ՆՄԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ



ՍԱՐՄԸ ՊԵՏԻ ՄՆԱՅ

Գիտնականներ Սինկափուրդին հիւանդներու ՍԱՐՄի ժառանգութեամբ են ժառանգուելու՝ այլ երկիրներէ, ուր անիկա հարուստացած է:

Անոնք գտած են, որ ժառանգութեան բաղկացուցիչը զլիսաւոր մասը անփոփոխ մնացած է հիւանդութեան (տարբեր երկիրներու մէջ) տարածումին ընթացքին:

Հետազոտողներուն կարծիքը այն է, թէ ժառանգութեան ղրուութեան յարձակումին դիմադրելու համար եւ, հետեւաբար, պէտք չունի արագօրէն եղափոխուելու:

Սակայն ժառանգութեան ղրուութեան կը նշանակէ, թէ որեւէ պատուաստ, որ կը մշակուի, կրնայ երկար տեւողութեան վրայ օգտակար մնալ ՍԱՐՄի դէմ:

Մասնագէտներ գտած են արդէն ՍԱՐՄը պատճառող ժառանգութեան ղրուութեանը. անիկա Բորնա ընտանիքին մէկ անդամն է: Գիտնականները գայն Սարս - Բովի (Sars-Cov) կոչած են:

Ժառանգութեան ղրուութեան տեղեկութիւններուն յայտնաբերումը եւ այն տուեալը, թէ անիկա ծինային չնչին յալսանքով կ'ենթարկուի, «երկարատեւ» է, այն իմաստով, որ ժառանգութեան ղրուութեան համար, այլ խօսքով, անիկա երկարատեւ մեզի հետ պիտի մնայ, կ'ըսեն մասնագէտները:

Անցեալ շաբաթավերջին ԱՀԿը աշխարհի տարածքին կառավարութիւնները գզուչացուցած է՝ ըսելով, որ ՍԱՐՄի ժառանգութեան միջոցները պէտք է շարունակել, հակառակ անոր որ հիւանդութեան պարագայները կը մնան պարզ:

Կազմակերպութեան պաշտօնատարները յայտնած են, թէ ՍԱՐՄի դէմ պայքարը ցոյց տուած է, թէ ինչ կարելի է ընել, երբ առողջապահութեան միջոցառումները իշխանութիւնները գործակցին:

Հէյմընի համաձայն, աշխարհի տարածքին պաշտպանութեան միջոցները ամբողջովը ձեւերէն մէկը աւելի մեծ ներդրումներ կատարել է գիտաշխատանքներու եւ վարակիչ հիւանդութեանց շուրջ հետազոտութիւններու համար:

ՍԱՐՄ, որուն համար տակաւին դարձանուծ չկայ, եւ որուն պարագաներուն շուրջ 15 առ հարիւրը մահացած է, արդէն մօտաւորապէս 775 գոհ խլած է ու վարակած աւելի քան 8400 հոգի:



Գիտնականներու համաձայն, ՍԱՐՄի ժառանգութեամբ են ժառանգուելու՝ այլ երկիրներէ, ուր անիկա հարուստացած է: Գիտնականները գայն Սարս - Բովի (Sars-Cov) կոչած են:

ՍԱՐՄԸ ԱՆՋՐՊԵՏԷՆ ԵԿԱԾ...

ՍԱՐՄը կրնայ անջրպետեմ եկած ըլլալ, ըստ բրիտանացի եւ հնդկիկ աստղակենսաբաններու: Անոնք բրիտանական «Լանսէթ» բժշկական կայանի շաբաթօրեայ Մայիսի քիւնթերէ մէկուն մէջ գրած են, թէ այդ պայմանները եկած է Յունուար 2001ին տեղի ունեցած փորձարկումներէ, որոնց ընթացքին մահերէնէրէ զերծ յատուկ օդապարիկ մը սթրաթեգիան պարզ է կազմելու հաւանական է: «Մեծ քանակութեամբ մարտիկներ հաւաքուցեցան 41 հազար մէքը բարձրութեան վրայ», ըսած են անոնք բացատրելով, որ մոլորակի տարողութեամբ, ատիկա կը ճշգրտակէ, թէ օրական անջրպետեմ երկրագունդին վրայ կ'իյնայ մէկ թոն միքրոէակներ:

Ինքնին ժառանգութեան ղրուութեան տեսակներու մէջ, որոնցմէ մէկը կատուի տեսակ մըն է: Հոնկ Բոնկի համալսարանին միջոցակենսաբանութեան բաժանմունքին տնօրէնը՝ Բուէն Բուրք-Բուրքը կ'ըսէ, թէ ծինային տեղեկութեան ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ, որ՝ «չատ հաւանաբար ՍԱՐՄի ժառանգութեան ղրուութեան անհետացումը մարդոց»:

Հարաւային Չինաստանը յատուկ հակում է սէր ունի վայրի կարգ մը ստանաւորներու, անհետացման վտանգի տակ գտնուող կրիաներու եւ օձերու նկատմամբ՝ զանոնք ուսուցելու իմաստով: Սակայն այդ սովորութիւնները հետզհետէ աւելի հակողութեան տակ կ'առնուին, որովհետեւ վայրի անասուններու եւ մարդոց միջեւ այնքան սերտ կապը կ'օժանդակէ անասուններու ժառանգութեան, որ ցատկան ու մարդոց անցին:

ՊԵՏՃԻՆԿ ԻՐ ԿԵՆՂԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԷՁԻՆ ԱՆՍՈՒՆԵՐՈՒՆԵՐՈՒՆԵՐԸ ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԷՁԻՆ ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԷՁԻՆ ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԷՁԻՆ:

Մայիսի սկիզբը Պէյճիկի կենդանաբանական պարտէզին պաշտօնատարները յայտնած են, թէ հոն գտնուող անասուններուն կենսանիւթեր եւ չինական դեղեր կը հայթայթուին զանոնք ՍԱՐՄէն պաշտպանելու համար:

Արեւմտեան, վագրեր եւ յովազներ Սէ. կենսանիւթ ստացած են իրենց հում միսերուն հետ՝ անոնց բնական պաշտպանութիւնը ամբողջովը համար. իսկ թռչունները չինական խոտեր կը ստանան իրենց կերին հետ, ըսած են անոնք:

Օրանկութեանները սովորականէն աւելի թարմ պտուղներ կը ստանան: Նախազգուշական այլ միջոցառումներու շարքին, աշխատաւորները կը հականիւթ կենդանաբանական պարտէզին գետնին, ըստ լաւ կը լուան պտուղներու ու բանջարեղէնները՝ նախքան զանոնք անասուններուն տարը:

Գէթ Մայիսի սկիզբը բոլոր անասունները առողջ էին:

ԱԲԵԼԻ ԱԺԱՆ, ԼԱԲ ՊԱՏՈՒԱՍՏՆԵՐՈՒ ԶՈՅՍ

Սկզբից մէջ գիտնականներ մշակած են պատուաստի պատրաստութեան նոր ձեւ մը, որ իրենց կարծիքով, յատկապէս օգտակար պիտի ըլլայ բարգաւաճման ընթացքի մէջ գտնուող երկիրներու համար:

Անոնք կ'առաջադրեն օգտագործել մանրէով սնանող ժառանգութեան, որոնք մարդու համար անվնաս են՝ մարդկային մարմնին պատուաստ հայթայթելու իրենց միջոցով:

Այս ձեւը գրաւել է, որովհետեւ նշեալ ժառանգութեան անհաւատարմութեան ղրուութեան հետ անոնք կրնան քանի մը ժամուան ընթացքին միջոցառող անգամներ բազմապատկուի:

Հետազոտութիւնը տակաւին սկզբնական շրջանին մէջ կը գտնուի, սակայն մուկերու վրայ փորձարկումները հետաքրքրական արդիւնքներ տուած են:

Եթէ կարելի ըլլայ իրագործել առաջադրուած միջոցը, ատիկա միակ պատուաստով մը երեխաներ բազմաթիւ հիւանդութիւններու դէմ պաշտպանելու ձեւ մը պիտի հայթայթէ:

Առողջապահութեան Համաշխարհային կազմակերպութեան փոլոյի դէմ պատուաստումի արշաւը ցոյց տուած է, թէ պատուաստ մը որքան յաջող կրնայ ըլլալ, այն աստիճան, որ հիւանդութիւնը մօտ ատենէն միայն յիշատակ պիտի ըլլայ:

Սակայն բարգաւաճման ընթացքի մէջ գտնուող աշխարհի բազմաթիւ մասերուն մէջ երեխաներ հետեւողականօրէն պատուաստներ չեն ստանար:

Ատոր պատճառը մասամբ այն է, որ պատուաստներու պատրաստութիւնը բարդ գործընթաց մըն է, եւ կարգ մը երկիրներ միջոցներ չունին:

ատիկա ընելու: Ատոր պատասխանը մանրէով սնանող ժառանգութեան ղրուութեան նոր ձեւ մը, որ կ'առաջադրուի մօտ գտնուող Մորիտիոս հետազոտութեանց հիմնարկին մասնագէտներէն տեղեկութիւնը: Մարչ կ'ըսէ, թէ շատ ատեն եւ դիւրին է պատուաստի պատրաստութիւնը:

